

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկինի համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արսասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԻ

Նամակ դրամ եռայլի դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած
ները միայն կը հրատարակուին ամբողջ
թիւին կամ մասամբ:
Դասնոցման տղը 20 սանթիմ. երե-
փն աւելի անգամներու համար 20 0/0
զեղը կը լինի, փոխարեւը կանխիկ:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԸ

—X—

Ա.

Անկախ, անկաշկանդ կեանքի
չգոյութեան հետեւանք, մեր ա-
մեն կազմակերպութիւնները մին-
չեւ հիմա եղած են խախտու, ան-
կերպարան եւ անտեւական:

Առնենք անոնցմէ մէկը, մեր
կրթական կազմակերպութեան հար-
ցը: Ի՞նչ կը ներկայացնէ ան:
—Քառասային վիճակ մը, խառ-
նակ, անորոշ, անպատակ:

Թէ և 60 տարեկան թուականներէն
սկսեալ, քանի մը վարձագած եւ
անձնուէր գործիչներ, Օտեան,
Ռուսիան, Ալաբոն, եւն. ֆը-
րանսական ոգիով եւ գաղափար-
ներով տոգորուին, Սահմանադրու-
թեան հիմնադիրներն ըլլալով՝ շա-
նացած են մեր ներքին կազմա-
կերպութիւնները որոշ, կանոնա-
ւոր ուղղութեան մը վրայ ձեւել,
սակայն պատրաստ մարդերու չգո-
յութիւն իրենցմէ զատ, և գլխաւ-
որապէս տիրող տարրին կաշկան-
դիչ ու խափանարար վարմունքը
մշտական պատճառները եղած են
մեր կրթական անկերպարան կազ-
մակերպութեան:

Իրաւ է թէ գոյութիւն ունե-
ցած են մատով համարուող մէկ եր-
կու վարժարաններ, որոնք լաւ
ուսուցիչներով ու լաւ ծրագրերի-
րով, մեծ ծառայութիւն մատու-
ցած են, սակայն ընդհանուր խա-
ւարին, որ կը տիրէ դարերէ ի վեր
հայ տարրին մտաւոր հորիզոնին
վրայ՝ չեն կրցած հակադդիչ լոյսը
ըլլալ, ու ողորդել զայն պայծառ
կերպով:

Միթէ մէկ երկու ջրարբի ովա-
սիսներ՝ կարող են դարման մը
ըլլալ անհուն անապատի մը պա-
պակուած բնակիչներուն:

Մեր ծխական վարժարանները,
թէ Պօլիս և թէ գաւառները,
ամենքն ալ աննախանձելի եղած
են թէ իրենց ուղղութեամբը և
թէ վիճակով: Անոնք, աւելի կը
նմանին տարբեր տարբեր խանութ-
ներու քան թէ վարժարաններու:
Ծրագրի նոյնութիւնը բացարձա-
կապէս կը պակսի անոնց. ամեն

ուսուցիչ, իբր խանութպան, իբր
քմայքին թելադրութեանը ենթա-
կայ՝ կը չափէ, կը ձեւէ, կը ծա-
խէ իր ապրանքը:

Հսկող մարմին մը, որ՝ ըստ
սահմանադրութեան տրամադրու-
թեանց՝ պէտք էր իր ուղղորդու-
թենէն չը վրիպեցնել ամեն շար-
ժում, ամեն շեղում որ կըլլայ
կրթական ասպարէզին մէջ, գրե-
թէ չէ եղած իսկապէս, թէ և գո-
յութիւն ունեցած է անունով, իբր
խրատիչական կենտրոն և խրատչեցնե-
լու միամիտ անձերը: Այսպէս ալ
30-40 տարեկան ժամանակամիջո-
ցին մէջ ուր գոռացած, ուր պոռ-
պուցած ենք ու պարծած ներքին
կազմակերպութեան անունով, չենք
կրցած յառաջ բերել սերունդ մը
որ ունենայ ամուր կրթութիւն մը
գիտական ու գրական անհրաժեշտ
ծանօթութիւններով առի, և մա-
նաւանդ կրթութեան բովէն ան-
ցած:

Ինչ որ յառաջ է եկած, իմաս-
տակութեան, պոռոտախօսութեան
և անպարծութեան մարմնացումն
է, որ տարբեր ձևերով ու տար-
բեր երեւոյթներով կը տիրէ ամեն
կողմ, առանց վնասէ զատ ոգուտ
մը յառաջ բերելու:

Բ.

Կրթական նոյն ցաւալի վիճակն
է որ կը պարզուի մեր առջեւ նաև
Ռուսմանիայի և Պուլկարիայի մեր
վարժարաններուն մէջ: Այս երկու
կրթական թիւերը՝ եթէ կրնանք
այսպէս խօսիլ, ի՞նչ փայլուն,
ի՞նչ օրինակելի ուղղութիւն մը
ու վիճակ մը պիտի ունեցած ըլ-
լային, եթէ զարգացած ու բանի-
բուն անձեր զարկ մը տուած ըլ-
լային ուսման հայեցող ու պուլ-
կարահայեցող մտային մակարդա-
կին բարձրացումին:

Ռուսմանիայի խորհուրդը որ իր
իրաւասութիւնը կը տարածէ նաև
մինչեւ այս նորածին անկախ եր-
կիրներու մէջ, բան մը չէ ըրած
գրապէս:

Ի՞նչ կրնար ընել ան: Կարելի
է մարմինէ մը բան մը ակնկալել,
երբ ան իր քիթն տակ իսկ գտ-
նուած հաստատութիւնները չը
կրնար ղեկավարել, ո՛ւր մնաց Պուլ-

կարիոյ և Ռուսմանիայի հայերը,
որոնք բարիք մը չեն վայելած Ռ-
սուսմանիայի խորհուրդին միջոցաւ:
Ռուսմանիայի խորհուրդը եւ
մանաւանդ պատրիարքարանը, 20
—30 տարեկան մէջ, չեն զրկած
այս կողմերը ոչ մէկ ձեռնհաս անձ
որ կարենար յառաջդիմութիւն մը
յառաջ բերել ու է վարժարանի
մէջ:

Պատրիարքարանը իր պարտա-
կանութիւնը ըլլալ կարծած է՝ եր-
բեմն Ռուսմանիա և Պուլկարիա
զրկելով տէրտէրներ ու վարդապետ-
ներ, որոնք՝ իրենց փորը ուսուցը-
նելէ զատ, բանի մը չեն ծառայած:
Մէկ երկու տարեկան մէջ «Մեծ
հովէն» ցրուած բաւական ուսու-
ցիչներ՝ «Պօլսոյ լաւագոյններէն»
եկան հաստատուեցան այս կողմերը
և ուղեցին օգտակար ըլլալ իրենց
հղբայրներուն: Բայց անոնք ալ
դժբաղդաբար, ընդունելութիւն չը
գտան կարգ մը հոգաբարձու եւ
թաղական աղաներու կողմէ, որոնք
աւելի խոնարհ ծառաներ կը փըն-
տըռէին իրենց դիմացը քան ուղ-
ղութիւն պարզող:

Վ.

ՊԱՐՁԵՆՔ ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ

(Շար. նախորդ թիւին եւ վերջ)

Բայց պարզելը միայն ուսուց-
ման զանազան ճիւղերը յապաւել
չի նշանակեր, եթէ արդարեւ կը
փափաքէինք «մարդ պատրաստող»
դպրոց մը ունենալ: Պարզելը ու-
սանելի նիւթերու ծայրայեղ բար-
դութեան մէջ ներդաշնակ միօրի-
նակութիւն մը մտցնել է. այս-
ինքն նշանակել զլիաւոր ուսում
մը որ կեդրոն ու կանոնաւորողն
ըլլայ ամբողջ դաստիարակութեան
որ հանգչեցնէ միտքը այն յարա-
տեւ ցիրուցան վիճակէն ուր կոր-
սուելու վտանգը կը սպառնայ տը-
ղուն:

Արդ՝ ոչինչ աւելի իրաւունք ու-
նի այն առանձնաշնորհքն քան
մայրենի լեզուն և ազգային պատ-
մութիւնը, և այս ուսման մէջ,
գեղեցիկ, հմտալից ու օգտակար
էջերու բացատրուած ու մեկնուած
ընթերցումը, քերականական, պատ-

մական ու բարոյական տեսակետով
և մանաւանդ—ինչ որ դժբաղդա-
բար շատ երեսի վրայ ձգուած է
մեր վարժարաններու մէջ՝ որոշ ու
հասկանալի առողջանութեամբն որ
կարծես մարդկային ճշմարիտ խօս-
քին զլիաւոր պայմանն է:

Պէտք է նկատի առնել որ մեր
աշակերտները խիստ կանուխ կը
թողուն վարժարանը և իրենց ստա-
ցած ամենատարրական ծանօթու-
թիւնները, եթէ խնդրենք գործ-
նական կեանքի անպէտնիւթերով,
անօգուտ նոյնիսկ վնասակար յոգ-
նութիւն մը կատարած պիտի ըլ-
լանք: Նախկին վարժարանի պարտքն
է հայկթայթել տղուն օգտակար
գիտութեանց ամփոփ սկզբունք-
ներ, տեսակ մը միտքը ծանօթու-
թեանց, իրողութեանց, թուա-
կաններու, պատմական և աշխար-
խագրական տեղերու, թուաբա-
նական, ուղղագրական և քերա-
կանական կանոններու, գործնա-
կան գիտութեանց, առողջաբա-
նութեան և երկրագործութեան
տարրական գիտելիքներու, և այս
սեղմ միտքը, ամենապարզ ու
ամենաբեղուն, պէտք է կէտ առ-
կէտ ամբացնել աշակերտին մտքին
մէջ, խստիւ պահանջելով օրն օ-
րին: Այսպէս տարի մը չանցնի
որ աշակետը իւրացուցած չըլլայ
օգտակար և ի հարկին գործածա-
կան տեղեկութեանց զանձարան
մը: Իսկ այս աշխատութիւնը ըստ
բաւականին դիւրացնելէ ետքը
պէտք է բոլոր ջանքը կեդրոնա-
ցընել ընթերցումներու և խօսակ-
ցութիւններու վրայ որոնք զլիա-
ւորապէս պէտք է դառնան ազգա-
յին մեծ գէպերու և մեծ անձե-
րու շուրջը: Անոնք են սր ամենէն
աւելի պիտի կարողանան մարզել,
կրթել, ձկնել աշակերտին մատաղ
միտքը, փարատել իր գաղափար-
ները միտքնոյ մշուշը, գործնա-
կարողական փրկարար ոկզբունք-
ներ որոնց ճշգրտութիւնը գործնա-
կան կեանքը պիտի ապացուցանէ:

Հայ վարժարաններու մէջ դաս-
տիարակութեան այդ ուղղութիւնը,
զոր Ազգային Դաստիարակութեան
պիտի կոչենք, գրեթէ բոլորովին
զանց առնուած է: Պատմական

դէպքերը չոր ու ցամաք սորվեց-
նել և աշակերտին գոց ընել տալը
ազգային դաստիարակութիւն չի
կազմեր. ներշնչող ոգի մը պէտք
է որ ուղղէ ուսուցանելի նիւթերն
ու գործադրելի մեթոտները, ու-
րուն շուրջը դառնան միւս բոլոր
ընդհ. գաղափարները. այն շունչը
որ սրտի ու մտքի խոր դաստիա-
րակութեամբ պիտի պատրաստէ
ազգին արդի պէտքին համապա-
տասխանող հոգիներ՝ կարող հա-
յութիւնը փրկելու այսքան աղետ-
ներէ ետքը կանխատեսող բա-
րոյական անկումէն: —Երբ ազգ
մը անկման մէջ է կը պատահի
վայրկեան մը, ուր անձնուէր մար-
դիկ իզուր կը կուռն անկման
պատճառներուն դէմ, որովհետեւ
ապականութեամբ մեծամասնութիւնը
կարող չէ ներշնչուիլ անոնց օրի-
նակէն: Աննիքալ չի կրցաւ կար-
գադինէն ազատել, ոչ Ս. Սահակ
հայաստանը և ոչ իսկ Յիսուսը՝
հրէաստանը իր կործանումէն: Ազ-
գեր կան որոնք շատ ցածերը կը
իշխան փրկուելու համար: Մենք
դեռ այն աստիճան խոնարհած
չենք ու կրնանք աշխատիլ ժողո-
վրդին մէջ կազմելու անձնուէր,
բարի ու ազնիւ նկարագրի տէր
անձեր և անոնց քով կտրիճ մար-
դոց սերունդ մը որ կարող ըլլայ
ներշնչուիլ ու առաջնորդուիլ ա-
նոնց օրինակէն: Այս է անշուշտ
այն մեծագոյն ծառայութիւնը զոր
հայ վարժարանները կրնան նպաս-
տել իրենց հայրենիքին մատուցա-
նելու: Նպաստել կրնան, որովհե-
տեւ պատրանք պիտի ըլլար, տե-
սակ մը աւելորդապաշտութիւն,
կարծել թէ կը բաւեն պարզութեամբ,
կոկոսած, խտացած ծրագիրներ,
և նոյնիսկ ճարտար ուսուցիչներ
«մարդ» պատրաստելու համար:
Մարդը խառնուրդ մըն է իմա-
ցականութեան և բնաւորութեան,
այսինքն նկարագրի, ենթակայ
վարժարանէն աւելի զօրաւոր ազ-

դակներու սրտնք մինչեւ իրեն հո-
գեկան կեանքի աղբիւրները կը
հասնին. ըսել կուզեմ ընտանեկան
և ընկերական միջավայրերը: Եթէ
այդ կրկին միջավայրերը այն
աստիճան ապականած են որ ա-
ռաքինութիւն, հնազանդութիւն,
պատիւ, հաւատարմութիւն մոռ-
ցուած է, հոն ապրող անհատներ
հպարտ, եսասէր ու փառամոլ
նկարագիր կուենան, զուրկ ազ-
նուութենէ և հոգեկան բարութե-
նէ: Ասոնք են աշխարհի ամենա-
մեծ պատուհասները, այն ընտը-
եալ սրիկաները, որոնց նմանները
պատմական այս շրջաններուն յա-
ճախ կերեւան, և որոնք բնու-
թեան անքննելի խորհրդով, կու-
գան կատարել ազգերու մէջ իրենց
կործանիչ առաքելութիւնը: Ասոր
համար է որ, չի մոռնանք աւել-
ցնել, բոլորովին անիրաւութիւն
պիտի ըլլար գալորցը լոկ պատաս-
խանատու ճանշնալ երիտասարդու-
թեան դաստիարակութեան և ազ-
գին բարոյական ապագային:

Լեւոն Սարգսեան

Փիլիպէ 17 Յուլիս 1898

ԱՆԿԵՂԾ ԸԼԼԱՆՔ

Անցեալ շաբթու տեղական թերթի
մը մէջ կարգադրի Ռուսուէրէն նամակ
մը, որ տեղւոյն ազգ. վարժարանաց
քննութեան և հանդէսին մասին գրե-
լով ըսած էր. «Ինչպէս հայերէնի,
նոյնպէս միացած բոլոր առարկաներուն
մէջ երկսեռ աշակերտները ցոյց տուին
փայլուն յաջողութիւն»:

Բայց այս գրութեան իրողութիւնն է:
Ահա հարց մը, որ ազգային կրթա-
կան գործին նախաձեռնողի եղող
ամեն անհատ կը հետաքրքրէ: Ուստի
կարելի եղածին չափ իրողութիւնը
պարզել պէտք է, որպէսզի ազգային
կրթական գործը՝ որ աղբիւր կեանքի
խնդիրն է, պարզուի և ազգային թե-
րութիւնները ձաղկուելով աւելի նա-
խաձեռելի վիճակ մը ստեղծուի:

Ռուսուէրի ազգային վարժարանաց
քննութիւնը կատարուեցաւ զրեթէ ե-
րեք շաբթիւներու մէջ. քննութեան

սրահը, բացի կիրակի օրերէն, 1—2
ուսկնդիրներ միայն կը տեսնուէին,
որոց մին այս սողերը գործն էր:

Նախ աշակերտաց յառաջդիմութեան
վրայ եւ տարեշրջանի արդիւնքի մա-
սին յստակ գաղափար մը կազմել տալու
համար վարժարանաց Տնօրէնութիւնը
թերացած էր նախորդ տարեշրջանի
քննութեանց արձանագրութիւններն
ու վարժարանի ծրագիրը մէջտեղ բե-
րելու: Այնպէս որ ամենէն ուշիմ ուս-
կնդիրներն իսկ չէին կարող որոշ գա-
ղափար մը ստանալ, թէ ներկայ տա-
րեշրջանի մէջ աշակերտք նախորդ տա-
րիէն աւելի ի՞նչ ուսած են:

Բայց կարգերու և դասարաններու
բաժանումներէն դատելով կարելի էր
միայն ազատ գաղափար մը ստանալ ե-
ղած քննութիւններէն, որ՝ անկեղծու-
թեամբ ըսելու համար, փայլուն յաջո-
ղութիւն մը չէ կարելի նկատել:

Հայերէնի դասերը միջակութեան
բնաւ վեր ելած չունէին, աշակերտաց
առողջանութիւնը և խօսելու ոճը կ'ա-
պացուցանէին թէ լուրջ խնամքի մը
հիթարկութեամբ չեն, ուսանալու և թը-
քահայ ասացուածներու անկապ խոս-
նուրդ մը դուրս կուգար աշակերտաց
չրթներէն. այս բանը աւելի նկատելի
էր բարձրագոյն կարգի աշակերտաց
վրայ, որոնց երկու տող հայերէն չա-
րագրութիւնը գոնէ մէջտեղ չը գրուե-
ցաւ:

Թուրքանութեան քննութիւնները
ցոյց տուին թէ՛ տարւոյն ընթացքին
մէջ եղած դասախօսութիւններն ապար-
գիւն եղած են զրեթէ, ինչպէս որ
բարձրագոյն կարգը հասարակ կոտորակի
պարզ բաժանում մը չկրցաւ ընել:

Պատմութեան դասերը աշակերտները
թուրքաօրէն գոց ըրած էին եւ մարդ
ծիծաղը չէր կարող բռնել, երբ բարձ-
րագոյն կարգի յաջողակ նկատուած ա-
շակերտներէն մին Բ. Դուռը (որ դա-
սատետրին մէջ գրուած տեսեր է) երկ-
րորդ դուռ կ'արտասանէր, փոխանակ
բարձրագոյն դուռ ըսելու:

Աշխարհագրութեան դասերը թուա-
բանութեան դասերէն նուազ խեղճ
չէին, աշակերտներէն շատերը քարտէս-
ներն իրենց աչքին առջեւ ունենալով
հանդերձ շատ անգամ կը գծուարանային
Եւրոպայի այնինչ մայրաքաղաքը կամ
այսինչ երկիրը մատնացոյց ընելու մէջ:
Բնական և ուսումնական աշխարհա-
գրութեան վրայ բնաւ հարցումներ
չուղղուեցան:

Փոխանակ երկրի յառաջդիմութեան և
բարեկուսութեան հոգ տանելու, իրենց
գոյութիւնը պահպանելու համար կը
մտածեն, իւրաքանչիւրը իր ստորա-
դասեալը կեղեքելով ու ծծելով անընդ-
հատ:

Իւրաքանչիւր քաղաքի կամ գիւղա-
քաղաքի մէջ զատ զատ ոստիկանու-
թիւններ կան իրարմէ բոլորովին ան-
կախ, իւրաքանչիւր բարձրաստիճան
պաշտօնեան դաշտակի (թաղապետ),
պէշտապետի (քաղաքապետ) և նախիմ
(կառավարիչ). իր պաշտօնի զուլա անց-
նելուն պէս, իրաւունք ունի իր մա-
նքին (ենթակալ) գտնուող ոստիկա-
նութիւնը փոխել, եթէ փարաշ պաշտի
(ոստիկանապետ) չունի կամ չկարենայ
իր պահանջը յազեցունել արծաթ թու-
մաններով, և այդ պաշտօնը ծախել մի
ուրիշ մէկի, որ անմիջապէս կը կազ-
մակերպէ ոստիկան խումբը ըստ իւր
կամայ, ի հարկէ ինքեւս կաշառուելով:

Ոստիկաններն եւս չունին ոստիկ,
միայն գոյլադրով (ծառայութեան վարձք)
և անկումով (մի տուրք, որ ամէն տա-
րաստանեալ կամ գաղափարեալ ա-
զատուելէն վերջ պարտաւոր է հասու-
ցանել ըստ փարաշի կամայ, կ'աղբին

Պրահայէն դասերուն մէջ՝ ուր ամե-
նէն աւելի առաւելութիւն մը կ'սպաս
ուէր, գոհացուցիչ արդիւնք մը չներշ-
մարուեցաւ: Բարձրագոյն կարգի աշա-
կերտք ընթացանութեան և թարգ-
մանութեան համար տարրական դասա-
գիրք մը կը գործածէին, միայն չորս
լծորդութեան բայերը կը խոնարհէին,
(անկանոն բայերը չի հարցուեցան) և
տախտակին վրայ կը գրէին Անի Ոճովի
10—20 երորդ հրահանգներէն նախա-
դասութիւններ թարգմանելով:

Այս է իմ կազմած գաղափարս պատ-
կերը Ռուսուէրի քննութեանց վրայ,
որոնց ներկայ գտնուեցայ:

Չեմ ուզեր հոս դասաւանդող ուսու-
ցանելու մասին իրարմէ ունեցած տա-
րբութեանց վրայ խօսիլ. միայն թէ
ուշիմ եւ հետաքրքիր ուսկնդիր մը
կրնար դատել թէ՛ իրօք ուսեալի համ-
բաւ ունենալ, ուսուցիչ ըլլալ չի նշա-
նակեր եղեր, ուսուցչութիւնը արուեստ
մ'է, որ ուսումնասիրութեամբ և ձիր-
քով օժտուած լինելու է: Մեր վար-
ժարանաց հոգաբարձութիւնք այս ան-
հերքելի ճշմարտութեան մեծ ուշադրու-
թիւն ընծայելու են:

Գ.

Տ. ՍԱՊԱՆ—ԳԻՒԼԵԱՆԻ

Հրաչեային հարցումներուն պա-
տասխանած չէք, այդ ձեր գործն
է, ոչ ոք կրնայ ձեզ ստիպել պա-
տասխանելու:

Իրաւունքի դէմ ուղղուած ձեր
գիտողութիւններուն երկու խօս-
քով կը պատասխանենք:

Հրաչեայ ձեր անհարկութեանց
ծանրութիւնը հասկնալու կարող է.
այս մասին մեր կողմէ բացատրու-
թեան պէտք չիկայ ուրեմն:
Եթէ ուզէ, կարող է իր անունով
հրապարակ գալ:

Պարոնին գրութեան պատաս-
խանատուութիւնը իր վրայ թու-
ղած էինք: Ատկէ ինքնին կը հե-
տեւի որ երբեք գիտաւորութիւն
չունինք, ուղղակի մենք ստանձ-
նել իր կարծիքներուն պաշտպա-
նութիւնը: Իրաւունքի անկողմնա-
կալութեան չէք հաւատար: Այո,
ինչպէս և ձեր ուրիշ աննպաստ

ու կ'ապրեցնեն իրենց մեծերը:

Ինչպէս քաղաքային նոյնպէս և ա-
ւելի թուր և անկերպարան է զինուո-
րական կազմակերպութիւնը: Թէեւ ա-
մէն լատիւնի (զինուոր) 3—5 տարի
զինուորական ծառայութիւն կատարել
պարտաւորիչ է, սակայն շատ քիչերը
զինուորութեան ամբողջ ժամանակին
մէջ հազիւ կը կարողանան զինուորա-
կան քայլերով կանոնաւորապէս յառաջ
ընթանալ: Շատ ծիծաղելի է տեսնել
ատոնց արգահատելի կացութիւնը,
կրթութեան ժամանակ, երբ սխալուող
զինուորը փոխանակ զօրապետի յան-
դիմանութեամբ իր սխալը ուղղելու,
ընկերի թերութեամբ կը ջանայ ինք-
զինք արգարացնել: Օրինակ, եթէ զօ-
րապետն ասէ, ոտներդ ուղիղ դիւր,
Հիւսէն, նա անմիջապէս կը պատաս-
խանէ «Հասան տուղ կոյսուն մանտա
կոյուն»: Մինչեւ հիմա, ընդհանուր
առմամբ, փամփուշտաւոր հրացան բաժ-
նուած չէ զինուորներին, որոնք մար-
դանք կը կատարեն միայն հիւն, նա-
հապետական լայնափող ազալի հրացան-
ներով:

ու սխալ կարծիքներու մասին, զոր կը յայտնէք իրաւունքի նշանակումը, կը ցաւինք անշուշտ, սակայն չարժեք, որ զանոնք ուղղելու աշխատինք:

Այս կամ այն շրջանակը կրնայ փափաքել իրեն թերաւ ընտրել իրաւունքը, որ սակայն երբէք, երբէք ուրիշին թերաւ չէ եղած:

Ձեր բանի մը նախատական բառերուն չենք կարող պատասխանել միեւնոյն կերպով, որովհետեւ այդ մեր ուղղութեան դէմ է: Ուրիշ ոչինչ ունինք ըսելիք ոչ հիմա և ոչ յետոյ եթէ դարձեալ փորձէք այս խնդրոյ առթիւ իրաւունքի հետ վէճի բռնուիլ, փոխանակ Հրաչեային պատասխանելու: Ուրեմն մեր վերջին խօսքն է այս, որովհետեւ անօգուտ վիճաբանութեան շատ ձանձրացած ենք և մեզի հետ մեր ընթերցողները:

ԱՆԱՅԻՏ

ՀԱՆԳԵՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳ., ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԹԵԱՍԿԱՆ

Ազգային ծանօթ գրագէտ Տ. Արշակ Զօպանեան ազդով մը կը ծանուցանէ թէ յառաջիկայ նոյ. 1ին պիտի սկսի հրատարակել ի փարիզ Անաճիտ անունով ազգային, գրական և գեղարուեստական հանդէս մը:

Հանդէսին ուղղութեան մասին Գրագէտ խմբագիրը իւր ազդին մէջ կրտէ:

«Ու և է քաղաքական գործունէութենէ զերծ, ու և է կուսակցութենէ անկախ, անձնական խնդիրներու բացարձակապէս անմաստ չելի, Անաճիտ պիտի ըլլայ գուտ մտաւորական հրատարակութիւն մը: Ամեն տեսակ խնդիրներ, — նոյն իսկ ազգային և քաղաքական հարցերը, որոնց բաժին մը պիտի յատկացուի, — նկատողութեան պիտի առնուին այս հանդէսին մէջ՝ գրագէտի անկողնակալ քննական ոգիով, և երբէք գործիչի, ազանդաւորի կրքոտ ու նպատակաւոր ձգտումներով:»

Բաժանորդագրիմը, — Օտար երկիրներու համար տարեկան 12 և վեցամսեայ 6 ֆրանք, իսկ Ֆրանսայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆր.:

Բաժանորդ գրուելու համար գիմել Տիար Արշակ Զօպանեանին, փարիզ, 6. Place de L'odéon.

ԼՐԱՔԱՂ

Շուշիէն կը գրեն Նոր-Դարի թէ Տ. Առաքել Առաքիլեան մեռած է: Հանգուցեալը չուրջ 10,000 ռուբլի նուիրած է ազգային այլեւայլ հաստատութեանց, մանաւանդ իր հոգածութեան առարկայ ըրած է աղքատիկ ուսանողները:

— Հին-Նախիջևանի Փառակայ գիւղացի Շմաւոն Գալուստեան անուն 35 տարեկան անձը, քաղաքէն գիւղ գա-

ցած ատեն թուրք աւազակներէն յարձակում կրելով ծանրապէս վիրաւորուած ու երրորդ օրը մեռած է: Աւազակներն իրենց զոհին ձին, 102 ռ. դրամ և և զգեստները կողոպտելով խոյս առած են: Այս զէպքի վրայ ոստիկանութիւնը չորս թուրքեր ձերբակալած է: Շմաւոնի մեռած շրջակայ թուրք զիւղացիներէ կը պահանջուի եղեր:

— Ռուսաց պատշաճաւոր հոգեւոր իշխանութիւնը մի նոր կազմակերպւած միախմբութիւն է ուղարկում Պարսկաստան՝ նեոստորակներին մէջ գործելու: Մայրաքաղաքի թերթերի ասելով, միախմբութեանը յանձնուած է 15,000 ռ.՝ եկեղեցիներ և ուսումնարաններ հիմնելու համար: Միախմբութեան կենդրոնակայքը Ռուսիան կը լինի:

— Այս օրերս բացատրուած է, որ Ռուսիայում դաժնուած օտարազաւան ուսումնականներու ուսնադաւան երթիւններ կարող են ընդունուիլ միայն այն զէպքով, երբ ուսուցիչը ուսնադաւան կ'ունենայ և ուսնադաւան կը լինի:

— Տիգրիսի մէջ կը կարգանք. Մանչեսթրի մէջ Յուլիոս 3 ին, տեղւոյն գրադարանի անդամները ժողով մը ունեցեր են, ուր որոշած են իրենց տուած նուէրներն ետ առնել: Ոմանք առաջարկած են այդ նուէրները որբերու յատկացնել, բայց անոնց ձայնն անլսելի մնացած է:

— Ուսթըրէն Տիգրիսի կը գրեն. «Ամէն շաբթու հայեր խմբովին զէպ Հայրենիք կը դիմեն. այս վերադարձողներու մեծամասնութիւնը հայ գիւղացիներ են, որոնք իրենց հետ թանկ ընծաներ կը տանին՝ նուիրելու համար իրենց գիւղին թիւրք աղային կամ Պէկին»:

— Թղթակցութիւնէ մը կ'իմանանք թէ Ուսթըրի հայոց Ս. Փրկիչ Եկեղեցւոյ նորընտիր հոգաբարձութիւնը հրաժարած ըլլալով, Ամերիկայի հայոց հոգեւոր հովիւ Տէր Մաշտոց վարդապետ՝ ժողովրդեան ազդու կոչ մը ըրած է որ ընդ փոթ հաւաքուի ու Եկեղեցին գործելու վաճառէ փրկէ: Գոհութեամբ կ'իմանանք թէ յաջորդ կիրակի հետաքրքիր բազմութիւն մը լեցուած է եկեղեցին: Թիւր ու զէմ կարծիքներու փոխանակութիւններէ վերջ, եթէ անձերէ բազմաթիւ յանձնախումբ մը ընտրուած է, որ առժամապէս իր վրայ պիտի առնէ Եկեղեցւոյ հոգը ու պիտի բանակցի Տէր Մաշտոց վարդապետի հետ, սա 40 տարւոր ամսական կը պահանջէ եղեր. եթէ յանձնախումբին ու վարդապետին միջեւ համաձայնութիւն մը չի գոյանայ, Եկեղեցին գոց պիտի պահուի, մինչեւ յաջորդի նոր վարդապետ մը բերել տայ: Յանձնախումբի անդամներն են՝ Տիար Զօքթ. Մ. Գալանճեան, Ա. Գալանճեան, Պ. Թորոսեան, Պ. Գուրգուսեան, Կ. Սանթրեան, Մ. Բարակեան և Ս. Դրիգորեան:

— Բիւզանդիոնի մէջ կը կարգանք Դատական Գործոց նախարարութիւնը պաշտօնագիր մը ուղղելով Պատրիարքարանի, տեղեկութիւններն ու կարծիքն ուղած էր այն հայ որբերու նկատմամբ որք տարուած են իտալիոյ Անքոնա քաղաքին մէջ ի նորոյ հաստատուող որբանոցը: Քաղ. Ժողովն ուշադրութեան առնելով թէ՛ Եւրոպիոյ և թէ՛ Օսմ. երկիրներու մէջ զանազան տեղերէ օտար որբանոցներ տարուած երկսեռ հայ որբերու վիճակն, և լսելով այս մասին իր Ս. Նախագահին տեղեկութիւններն ու

տեսութիւններն, որոշեց տալ կայս. կառավարութեան պէտք եղած պատասխան:

— Տիար Գաբրիէլ փափազեանի յուզարկաւորութեան առթիւ որ կատարուեցաւ ամսոյս 19 ին ի վառնա, հանգուցեալին Պօլսարնակ ազգականներն փոխան ծաղկեպետակի հետեւեալ գումարները նըւիրած են Պօլսոյ Ազգ. Հիւանդանոցին:

Տիար և Տիկին Խաչիկ Խօրասանճեան 216 զրշ: Տեարք՝ Երեւում փափազեան 216, Երեսէս Գ. փափազեան 108, Բարսեղ Կիւլպէնկեան 108:

— Երուսաղէմի Յարութիւն Ս. Պատրիարքը վարդապետի տօնին առթիւ 10 սարկաւազներ վարդապետ ձեռնադրեր է: Այս նորընծայներէն մէկ բանին Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանէն շրջանաւարտ և միւսներն ինքնօգնութեամբ առաջնորդներ են եղեր:

Մենք ալ կը մաղթենք որ վերջը գրուելէ վերջ յետադիմողներ չըլլան, ինչպէս է զիրենք ձեռնադրողը:

— Խասգիւղի (Պօլիս) ազգային վարժարանին ուսուցիչներէն Տիար Մկրտիչ Թէրզեան, անցեալ երեք շաբթի գիշեր իր տան մէջ անձնասպան եղեր է բռնաբիւս տորճանակ մը պայթեցնելով:

Անձնասպան ուսուցիչը թաղին անտուկէն բաւական առնելիք ունենալով հանդերձ, իր ընտանիքովը ու երեք զաւակներովն յետին խեղճութեան մէջ կը գտնուի եղեր:

— Պօլսոյ Ազգ. Կեդր. վարժարանի խնամակալութիւնը պաշտօնապէս կը ծանուցանէ թէ յառաջիկայ տարեշրջանի համար Գ. կարգ մը ալ բացուած է, 95-96 շրջանի Բ. կարգի այն աշակերտներն, որոնք յետ ըննութեան արժանի հանդիսացած էին իրենց կարգը փոխելու, կրնան առանց ըննութեան աշակերտել սոյն նորակալմ դասարանին մէջ: Փափաքողք պարտին գիմել մինչեւ օգոստոս ամսոյ վերջն:

— Սանասարեան վարժարանի տեսչութիւնը եւս կը ծանուցանէ թէ վարժարանին ԺԸ. տարեշրջանը կը սկսի յառաջիկայ սեպտ. 1 ին. և նորեկ աշակերտաց մուտքի ըննութիւնները տեղի կունենան օգոստ. 28 ին: Նոր թոշակաւոր աշակերտաց ընդունելութեան պայմաններուն և այլ տեղեկութիւններու համար, ծնողք կամ խնամակալք կը հրաւիրուին գիմել ի կ. Պօլիս Ազգ. Պատրիարքարան և կամ ի կարին վարժարանին Տեսչութեան:

— Թունաստանի նախկին նախարարապետ Պ. Բալի՝ որ կ'Պօլիս եկած ըլլալով Սուլթանի ալ ներկայացած ու շողօքորթ ընդունելութեան մը արժանացած էր, և որ նպատակ ունէր Սօֆիա ու Պէլլաւա ալ այցելել, անցեալ ուր բաթ օր Սօֆիայի առջեւէն անցնելով ուղղակի վիճնա գացած է:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Այլեւայլ քաղաքներէ պաշտօնական մարմիններ ու անհատներ խմբագրութեան կը զրկեն ծանուցումներ թերթի մէջ գետեղելու համար եւ կը հարցնեն մեզ թէ որչափ վճարելու են: Ասոնց իւրաքանչիւրին մի առ մի պատասխանել՝ բնական է, աւելորդ ծախք եւ զբաղում կը պատճառէ. ուստի այս անպատեհութիւնէն միանգամ ընդ միշտ ազատելու համար հրապարակաւ կը կրկնենք թէ՛ ով որ լրագրիս միջոցաւ ծանուցում մը կամ ազգարարութիւն մը ընել կ'ուզէ, պարտի «Իրաւունք»-ի ճակատը նշանակուած պայմանին համեմատ հաշուել, այսինքն մէկ տողը, որ գրեթէ 25 տառ կը պարունակէ, 20 սանթիմ մէկ անգամի համար, իսկ երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լինի: Փոխարէնը կանխիկ զրկել:

ԹԷՊՐԻՔ

Ամերիգանըն վէնէզուէլլա նամ տէվէթին Ճիւսուրիյէթ ըէյիսի Մ. Մինաս Զէրազա՝ «Մէարիֆի Ումուդիյէ» վէ «Կուսթօ տէլ Լիպէն. Թատոն» նիշանլարընը իհտա իթ. միշ օլաղը մաէլ մէմուրիյէ լ'Աւ. մէնիտէ օգուտըգ: Մ. Զէրազըն մարուֆ օլան մէհարէթ ու տիրա. յէթի էճնէպի տէվէթիւրտէն թագ. տիր օլընտըղը պիղճէ մուսիպի մէսէրըթ օլմագտան զիյատէ պա. յիսի մէֆիւարէթ տիր. օլ հալտէ տիրայէթի ըէֆիգիմիզի շու մու. վաֆֆագիյէթտէն տօլայը թէպ. ըիք իտէրիզ:

ՏԱԽԻԼԻՅԷ

ԿԱԶԷԹԱ ՆԻՉԱՄՆԱՄԵՍԻ

Պաղը Պուլկար կազէթալարը ճէրիտէլէր իշիւն մաթպաա նի. զամիամէսինէ պիր թագըմ թէ. պէտտիւլաթ կիրմէսինէ տայիր հիւրիւմէթ պու սէնէ թէճէմմիւ. օլընաճագ Գամարայա թէքլիֆաթ. տա պուլընաճաղընը եազմըլլար ըտը: Վիտինտէ պիր կազէթանըն նէշրինէ կէօրէ, պու թէքլիֆաթ պաշլըճա շու նօթթալարտան իպա. ըէթ օլաճագ ըմըշ:

«Հէր կազէթանըն մուհարրիրի մէսուլը (օթկօլօրնիկ) պիր տաիւլ ֆինուստա (համալսարան) թահսի. լի իմ իթմիշ օլաճագ: Կազէթանըն սահիպի եախօտ նաշիրի մա. ըուֆ (ծանօթ) պիր զաթ օլուպ, թէմինաթ իշիւն 2000 ֆրանք տէ. բօզիթ իտէճէք:

Հէր պիր պէստին ալթընտա եազանըն իմզասը կէօրինէճէք. վէ պէստի եազան քէնտիսի պիղ. զաթ մէսուլ օլաճաղընտան մաատա կազէթանըն մուհարրիրի-մէսուլը տախի շէրիքի թէօհմէթ թանը. լաճագ»:

Սօֆիանըն նիմ ըէսմի իսթօգ ճէրիտէսի պու հալատիսին էսաս. սըղ օլաղընը եազարագ տէմիշ տիր. «Հիւրիւմէթին միւսթագ. պէլտէ նէ նիյէթի օլաղընը պի. լէմէյիւ. ֆագաթ շայանը էմիւ:

